Ուսանողական հետազոտություն

Արցախի Հանրապետության ձեռքբերումներն ու բացթողումները հակամարտության համատեքստում

Ստեփանակերտ 2023

Մնեժանա Թամրազյան

Արցախի պետական համալսարան,
Իրավագիտություն, 3-րդ կուրս

Գիտական ղեկավարներ՝ Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արման Թաթոյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Տաթևիկ Գևորգյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հետազոտությունն իրականացվել է «Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպության և Արցախի պետական համալսարանի համագործակցության արդյունքում՝ ուսանողական հետազոտական աշխատանքների դրամաշնորհի շրջանակում:

Ներածություն

Մենք անընդհատ խոսում ենք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքից, բայց տարիներ ձգված բանակցություններից չենք կարողանում քաղել անհրաժեշտ փաստարկները և օգտագործել դրանք հօգուտ մեզ: Հասարակության զարգացմանը զուգընթաց մարդկանց գիտակցության մեջ օրեցօր ամրապնդվում է այն մտածելակերպը, որ քաղաքական և ընդհանրապես ամեն տիպի հարցերի լուծման համար լավագույն եղանակը երկխոսությունն է, բանակցությունը, համոզումը, այլ ոչ թե ուժն ու բռնությունը:

Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեն հիմնախնդրին առնչվող առանցքային իրավաքաղաքական փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Արցախի հիմնախնդիրը մնում է դեռևս չկարգավորված: Դրա պատճառներից են Արցախի և ՀՀ թույլ դիվանագիտական մակարդակը, մեր երկրի առաջնորդների ոչ ճիշտ քաղաքականությունը, գերտերությունների տարածաշրջանային հակասությունները, շահերի բախումը, ցանկացած լուծում պահանջում է նրանց դիրքորոշումը:

Սույն հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրելու ենք Արցախի հիմնախնդրին առնչվող կարևոր փաստաթղթերին, բանակցային գործընթացին, Արցախի և ՀՀ իշխանությունների դիրքորոշումներին,տարբեր երկրների կողմից հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի շարժառիթները, վեր ենք լուծելու յուրաքանչյուր փաստաթուղթ՝ դիտարկելով կարևորության սկզբունքով:

Որպեսզի հասկանանք, թե այս կետից ինչպես կարող է լուծվել, կարգավորվել Արցախյան խնդիրը, անհրաժեշտ է հասկանալ, թե այսքան տարիների ընթացքում, ինչ ձախողումներ և հաջողություններ ենք ունեցել:

Արցախյան հիմնախնդրի արդի փուլը

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ներկա փուլը սկսվել է 1988թ., երբ ի պատասխան ԼՂ բնակչության ինքնորոշման պահանջի, ադրբեջանական իշխանությունները կազմակերպեցին հայ բնակչության կոտորածներ ու էթնիկ զտումներ: Սկսվեց Ղարաբաղյան Շարժումը, որի նպատակն էր՝ հիմնվելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա և առաջնորդվելով ԽՍՀՄ Սահմանադրությամբ, հասնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության օրինական պահանջի բավարարմանը:

Որպես կանոն, ազգերի ինքնորոշման իրավունքը դիտարկվում է տարածքային ամբողջականության սկզբունքի հետ այնպիսի հակադրության մեջ, որ այդ սկզբունքներից մեկի իրագործումը բացառում է մյուսի իրագործման հնարավորությունը: Տարածքային ամբողջականությունը, հանդիսանալով սկզբունք ուղղված ՄԱԿ-ի նպատակների իրականացմանը, չի կարող հակադրվել ՄԱԿ-ի նպատակ հանդիսացող ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքին: Մեր իրավիճակն այնպիսինն է, որ

միջազգային հանրությունը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, բայց ընդունում են նաև այն հանգամանքը, որ հակամարտության խաղաղ կարգավորումը պետք է ներառի նաև ինքնորոշման և ուժ չգործադրելու սկզբունքները:

ՄԱԿ-ի կանոնադրությունը (հոդված 1.2) ազգերի ինքնորոշման սկզբունքը սահմանում է որպես ՄԱԿ-ի գլխավոր նպատակներից մեկի իրականացման հիմք. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»[1]: Հատկանշական է, որ որևէ սահմանափակում կամ վերապահում այդ իրավունքի համար ոչ կանոնադրությունը և այդ դաշնագրերը չեն սահմանում: Ինքնորոշումը բոլոր ժողովուրդներին վերաբերող իրավունք է, որի կենսագործումը պահանջվում է ՄԱԿ-ի կանոնադրությամբ[2]:

- «Համաձայն ՄԱԿ կանոնադրությունում ամրագրված ազգերի իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի, բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն, առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը, հետամուտ լինել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը, և յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ համաձայն կանոնադրության դրույթների»:
- «Ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման ձևերն են անկախ և սուվերեն պետության ստեղծումը, ազատ միացումն անկախ պետության կամ միավորումը դրա հետ, կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակը, որն ազատորեն կորոշի այդ ժողովուրդը»:

Հետևաբար միջազգային իրավունքը հստակորեն և սպառիչ սահմանում է բոլոր իրավական հիմքերը ինքնորոշման իրավունքի կիրառման սուբյեկտի, ձևերի և մեխանիզմների, հետևաբար և ճանաչման համար: Սակայն կան մի քանի հանգամանքներ, որոնք կարող են հետաձգել ճանաչումը, երբ «մայր պետությունը» չի ճանաչում իրենից անկախացած պետությունը: Չճանաչված պետությունները չունեն միջազգային իրավասուբյեկտություն և, հետևաբար, չեն կարող համարվել պետություն՝ անգամ եթե բավարարում են բոլոր վերը նշված չափանիշներին: ճանաչումը, ըստ էության, քաղաքական գործընթաց է.

- «Պետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշներին՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, և դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն»[3]:

Կոնվենցիայի Հոդված 1-ի չորս չափանիշների կապը պետության անկախության ճանաչման հետ կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ պետությունը ճանաչվում է, եթե այն հռչակվել է կոնկրետ

---

[1] Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն/ Charter of the United Nations
[2] 1970թ. հոկտեմբերի 24-ին ընդունված «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին» ակտ
[3] Մոնտեվիդեոյի կոնվենցիա

տարածքում (բ չափանիշ) ապրող բնակչության կամքի ազատ արտահայտմամբ (ա չափանիշ), այդ տարածքն ամբողջությամբ վերահսկվում է կառավարության կողմից (գ չափանիշ), որը կարողանում է հարաբերություններ հաստատել այլ պետությունների հետ (դ չափանիշ):

Արցախի դեպքում իրականում հավասարապես կարելի է հենվել և ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների վրա: Արցախը ինքնահռչակվել և ներկայումս էլ պետականության իր գործառույթներն իրականացնում է իրավաբանորեն Ադրբեջանին չպատկանող տարածքներում:

Դեռ 1990-ի օգոստոսի 23-ին Հայաստանը ընդունել էր Անկախության հռչակագիր և ձեռնամուխ էր եղել Խորհրդային Միությունից դուրս գալու օրինական, իրավական գործընթացին, մինչդեռ Ադրբեջանը մտադիր էր մնալ Խորհրդային Միության կազմում:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը: Ընդունվեց հռչակագիր ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին՝ հիմք ընդունելով 1990թ. ապրիլի 3-ի Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի «Խորհրդային Միության կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի» մասին օրենքը[4]: Այդ օրենքի առանցքը Խորհրդային Միության կազմից դուրս գալու հանրաքվեի գաղափարն էր: Եթե միութենական հանրապետությունը ցանկանում է դուրս գալ Խորհրդային Միության կազմից, ինչը թույլատրում էր սահմանադրության 72-րդ հոդվածը, ապա ընթացակարգը հանրաքվեն է՝ ժողովրդական քվեարկությունը: Փաստորեն, ընտրելով հռչակագիրը և անկախության ուղին՝ ԼՂՀ-ն առաջնորդվել է դեռևս գործող ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենդրությամբ միութենական հանրապետություններին տրվող լիազորություններով, իսկ ԽՍՀՄ լուծարումից հետո՝ միջազգային իրավունքի ճանաչված սկզբունքներով:

Արցախում 1991-ի դեկտեմբերի 10-ին, տեղի ունեցավ անկախության հանրաքվե:

Այսպիսով, Արցախն իր անկախությունը հռչակեց դե յուրե գոյություն ունեցող Խորհրդային Միության օրենսդրության տառին ու ոգուն համապատասխան՝ չխախտելով որևէ օրենք և ընթացակարգ: Եթե Ադրբեջանի համար օրինական է օրենքին հետևելն ու անկախանալը, ապա այն համարժեք նշանակություն և կիրառություն ունի նաև Արցախի համար:

Նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարածքում ձևավորվեցին երկու իրավահավասար պետական կազմավորումներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից կասկածից վեր է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից անկախության հռչակումը և իրականացումը միանգամայն իրավաչափ է, իսկ Բաքվի փորձերը հակադրելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը

[4] http://www.libussr.ru/doc_ussr/usr_16379.htm

Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հակասում են միջազգային իրավունքին, ինչպես նաև ՄԱԿ-ի առջեւ Ադրբեջանի ստանձնած պարտավորություններին:

Տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող կիրառվել մի տարածքի նկատմամբ, որը երբևէ չի պատկանել անկախ ադրբեջանական պետությանը տվյալ պահին գործող օրենքներին լիովին համապատասխան: Մինչև 1991 թ. դեկտեմբերի 10-ին Արցախում անկախության հանրաքվեի անցկացումը, 1991 թ. օգոստոսի 30-ին, Խորհրդային Ադրբեջանի Գերագույն Խորհուրդն արդեն իսկ ընդունել էր «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» հռչակագիրը: Իսկ արդեն հոկտեմբերի 18-ին Ադրբեջանի Ազգային Խորհուրդն ընդունել էր «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին» սահմանադրական ակտը[5]: Նշված ակտով Ադրբեջանի Հանրապետությունը հռչակվում էր ոչ թե Ադրբեջանի ԽՍՀ, այլ 1918 թ. մայիսի 28-ից -1920 թ. ապրիլի 28-ը գոյություն ունեցած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը: Նույն սահմանադրական ակտի 3-րդ հոդվածով անվավեր էր ճանաչվում 1922 թ. դեկտեմբերի 30-ի՝ ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը: 1920 թ. ապրիլի 27-28-ին Խորհրդային Կարմիր բանակի մուտքն Ադրբեջան որակվում է իբրև «Ռուսաստանի կողմից Ադրբեջանի անեքսիա»:

Արցախը չի եղել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության մաս: Այն արդեն խորհրդայնացված Ադրբեջանին բռնակցվել է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ: 1921թ.-ին հուլիսի 4-ին Կովկասի կոմունիստական մարմնի նիստում քվեարկությամբ որոշվում է Արցախը ճանաչել Հայաստանի մաս, հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, Ադրբեջանի ղեկավարության բողոքներից հետո, Ի.Ստալինի միջամտությամբ, առանց որևէ քվեարկության, ապօրինաբար որոշվել է Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու մասին:1923թ-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը ստեղծվել է Ադրբեջանական ԽՍՀ-ում: Այսպես, 94.4 % կազմող հայ բնակչությամբ ԼՂ-ն ապօրինաբար տրվում է Խորհրդային Ադրբեջանին: Կովբյուրոյի այս որոշումը հենց սկզբից իրավական հիմք, իրավաբանական ուժ չուներ, քանի որ 3-րդ պետության կուսակցական մարմինը իրավասու չէր լուծել միջպետական տարածքային հարց: Մինչև 1988թ.-ը արցախահայությունը պայքարել է Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաստանի հետ վերամիավորվելու համար:

Ինքնորոշման իրավունքի մասին խոսելիս չպետք է միջազգային հանրությանն ապացուցել, որ արցախահայությունն իրավունք ունի ինքնորոշվելու, այլ պետք է ցույց տալ, որ արցախահայությունն, օգտվելով իր ինքնորոշման իրավունքից, վաղուց այն իրականություն է դարձրել: Արցախի Հանրապետությունում առկա են ժողովրդավարական պետականության բոլոր անհրաժեշտ բնութագրիչները՝ քաղաքացիական հասարակության զարգացում, իշխանությունների երեք հիմնական ճյուղերի տարանջատում, պարբերաբար և պետական իշխանության բոլոր մակարդակներում անցկացվող հավասար ու ազատ ընտրությունների ինստիտուտի արմատավորում, մարդու իրավունքների պաշտպանության հաստատությունների ձևավորում, արդյունավետ պետական կառավարում իրականացնելու, միջազգային հարաբերություններ զարգացնելու և իր սահմանները պաշտպանելու կարողություն: 1992թ.-ին, երբ արդեն աշխարհի քարտեզի վրա չկար Խորհրդային Միությունը, Արցախյան հարցը

[5] «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին » սահմանադրական ակտ

միջազգայնացվեց: Առաջինը ԵԱՀԿ-ն էր, որ 1992-ի մարտի 24-ին ընդունեց փաստաթուղթ, որում ասվում էր, որ կարգավորման բանակցություններին պետք է մասնակցեն Հայաստանը, Ադրբեջանը, ինչպես նաև՝ Լեռնային Ղարաբաղի «ընտրված և այլ ներկայացուցիչները»: «Ընտրված» անվան տակ նկատի էր առնվում 1991-ի դեկտեմբերի վերջերին Արցախում ընտրությունների ճանապարհով ձևավորված խորհրդարանը: «Այլ»-ը, հավանաբար, Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցիներն էին, որոնք հանդես էին գալիս ի դեմս Շուշի քաղաքի իշխանությունների:

1992 թ փետրվարին ԵԱՀԿ դիտորդների այցից հետո՝ մարտի 3-ին Պրահայում ընդունված հատարարությամբ ԼՂ-ն ճանաչվել է բանակցությունների լիիրավ կողմ, ինչը բանակցային գործընթացում մեր հաջողություններից էր:

1992-1994թթ. բանակցություններն ընթանում էին պատերազմական գործողություններին զուգահեռ: Եվ՛ ԵԱՀԿ-ի ու նրա հովանու ներքո գործող Մինսկի խմբի, և՛ Ռուսաստանի խաղաղարար ջանքերն այդ տարիներին առաջին հերթին ուղղված էին կրակի դադարեցմանը, ինչը հաջողվեց 1994-ի մայիսին՝ Մոսկվայի միջնորդությամբ: Սկզբնական շրջանում ԼՂ-ն հրաժարվում էր բանակցություններին մասնակցելուց, քանի որ չէր հստակեցվում նրա կարգավիճակը, երկրորդ՝ «ղարաբաղյան կողմ» անվան տակ միջազգային հանրությունն ու Ադրբեջանը համարում էին «ԼՂ-ի հայկական ու ադրբեջանական համայնքները»:

Մայիսյան հրադադարից հետո մինչև Լիսաբոն բանակցությունները եռակողմ էին՝ Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ: Այդ բանակցությունների ընթացքում հիմնականում քննարկվում էին հակամարտության հետևանքների վերացման հարցերը՝ տարածքների վերադարձ, ապաշրջափակումներ, փախստականների վերադարձ, անվտանգության երաշխիքներ, միջազգային խաղաղապահներ:

1994թ.-ի մայիսին Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի խորհրդարանի նախագահները Բիշքեկում ստորագրում են ԼՂ Հակամարտության հարցերով ԱՊՀ-ի միջխորհրդարանական գագաթնաժողովի ավարտական արձանագրությունը, որով հիմքեր են դրվում զինադադարի մասին հետագա պայմանագրի կնքման համար: ՌԴ միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների և ԼՂ-ի զինված ուժերի հրամանատարի կողմից ստորագրված այս փաստաթուղթն ուժի մեջ մտավ 1994 թ- ի մայիսի 12-ին[6]: Նույն թվականին Բուդապեշտի գագաթնաժողովում հիմք է դրվում Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման և բանակցային գործընթացի համար:

Սեպտեմբերի 25-ին Մոսկվայում կայանում է հանդիպում ԼՂՀ և Ադրբեջանի ղեկավարներ Ռոբերտ Քոչարյանի և Հեյդար Ալիեւի միջեւ: Բացի այդ՝ բազմաթիվ երկկողմանի հանդիպումներ են տեղի ունենում ԼՂՀ եւ Ադրբեջանի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների միջեւ: Այդ բանակցությունները հիմք ստեղծեցին 1994թ. Բիշքեկյան արձանագրության[7] ստորագրման համար եւ 1994թ. մայիսին Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ անժամկետ

[6] May 1994 Cease-fire Agreement, at http://nkr.am/en/ceasefire-agreement/147/
[7] Բիշքեկյան արձանագրություն

զինադադարի կնքման համար, որին միացավ նաեւ Հայաստանը՝ որպես հակամարտության մեջ ներքաշված կողմ:

1994թ Բաքվի և Ստեփանակերտի միջև անմիջականորեն, ինչպես նաև միջնորդների մասնակցությամբ հրադադարի հաստատման հակամարտության կարգավորման նպատակով ընդունած բազմաթիվ փաստաթղթերում Ադրբեջանի հետ համատեղ առկա են ԼՂՀ պաշտոնյաների ստորագրությունները: Դրանցով Բաքուն մի քանի անգամ ճանաչվել է ԼՂՀ դե ֆակտո կարգավիճակը: Այս համաձայնագիրը կարևոր նշանակություն ունի, քանի որ այն վերջ է դրել ադրբեջանական իշխանությունների կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմին, հակամարտությունը տեղափոխել է քաղաքական-դիվանագիտական հուն և պայմաններ ստեղծել, որպեսզի կողմերը միջազգային միջնորդների օժանդակությամբ կենտրոնանան բանակցությունների վրա:

1994թ.-ին Հայաստանի գործող նախագահ Լևոն Տեր–Պետրոսյանը հետագայում 1994թ.-ի իրադրությունը իր «Պատերազմ, թե՞ խաղաղություն . լրջանալու պահը» հոդվածում գնահատել է այսպես.- «Դժբախտաբար, Ղարաբաղը շահել է ոչ թե պատերազմը, այլ ճակատամարտը: Պատերազմը շահում են միայն այն ժամանակ, երբ հակառակորդը կապիտուլյացիայի է ենթարկվում»: Մենք այսօր տեղյակ չենք՝ նման հնարավորություն եղել է թե ոչ, կամ արդյոք պատճառը արտաքին ուժերն էին, բայց Ադրբեջանին կապիտուլյացիայի չենթարկելը դարձավ մեզ համար ճակատագրական սխալ: Մինչդեռ այսօր 2020թ.-ի 44–օրյա պատերազմից հետո համարվում ենք կապիտուլյացված: Փաստորեն, մեր սխալների վրա փոխարեն մենք դասեր քաղենք, թշնամին է քաղել և օգտվել իրադրությունից: Արյան գնով ազատագրվածը մենք չկարողացանք պահել մեր դիվանագիտական սխալի պատճառով:

1954 թ.-ին հունվարի 25-ին Մոսկվան հաստատել է հրամանի նախագիծ,, որով Ղրիմի երկրամասը ՌԽՍՀ կազմից անցնում է Ուկրաինայի Խորհրդային Հանրապետությանը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ Ղրիմը Ուկրաինայի տարածքին շատ մոտ է և ընդհանուր մշակութային, տնտեսական, սոցիալական կապեր են առկա նրանց միջև: Այս հրամանը ուժի մեջ է մտել 1954 թ. -ի փետրվարի 19-ին (մեկ ամսվա ընթացքում):

Եթե այն ժամանակ հնարավոր էր այս օրինակով Ղարաբաղը միացնել Հայաստանին, ինչու՞ չօգտվեցինք այս միջոցից: Այստեղից եզրակացություն, որ ԽՍՀՄ տարիներին հանրապետությունների առանձին ղեկավարներ կարողացել են խորամանկ դիվանագիտության շնորհիվ հասնել իրենց նպատակին, այն է՝ համոզել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի քարտուղարին՝ հարցը լուծել հօգուտ իրենց: Կարծում ենք, այն ժամանակ էլ էր թույլ Հայաստանի դիվանագիտությունը, որ տեսնելով աշխարհաքաղաքական իրողությունները, ունենալով նախադեպ՝ չօգտվեց փորձի հաջողությունից: Ընտրվեց ցույցերի, հավաքների, պատերազմների տարբերակը:

Բանակցային գործընթացը /1994-2020թթ./

Լիսաբոնի գագաթնաժողով

1996թ. դեկտեմբերի 2-3-ը Պորտուգալիայի մայրաքաղաքում կայացավ ԵԱՀԿ գագաթնաժողովը, որի օրակարգում Եվրոպայի անվտանգության հայեցակարգի քննարկումն էր: ՀՀ նախագահը այդ ժամանակ Լևոն Տեր-Պետրոսյանն էր: Նրա դիրքորոշումը Ղարաբաղյան հարցի վերաբերյալ հետևյալն էր .

1. Վերադարձնել 7 տարածքներից 6-ը, այսինքն բացի Լաչինից,
2. ապահովել առավելագույն անվտանգություն ԼՂ-ի համար և ռազմական և միջազգային տեսակետից,
3. պատերազմն ավարտելով՝ պայմանագիր կնքել Ադրբեջանի հետ.
4. կարգավիճակի հարցը թողնել հետագա բանակցություններին:

Փատորեն տարածքներ խաղաղության համար, ոչ թե կարգավիճակի հստակեցման:

Անդրադառնանք Լիսաբոնի բանակցություններին: Այս գագաթնաժողովի հիմքում ընկած էին հետևյալ սկզբունքները՝

1. ԼՂ-ի ինքնավարության բարձր մակարդակ Ադրբեջանի կազմում
2. Անվտանգության երաշխիքներ
3. Կապ Հայաստանի հետ

Միջազգային հանրությունը ԼՂ հարցի կարգավորման այլ տարբերակ, քան Ադրբեջանի կազմում ԼՂ-ի ինքնավարությունն է, չէր առաջարկում:

Հայաստանի նախագահը՝ Լևոն Տեր-Պետրոսյանը, գագաթնաժողովի իր ելույթում ընդգծեց, որ հակամարտությունն Ադրբեջանի առաջարկած սկզբունքների հիման վրա լուծելու դեպքում «ցեղասպանության և բռնի արտաքսման մշտական սպառնալիքը» կախված կլինի Ղարաբաղի բնակչության վրա: Լևոն Տեր-Պետրոսյանը նշեց, որ «նոր ողբերգության բացառման միակ հնարավորությունը ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը հարգելն է»[8]:

Գագաթնաժողովում Երևանն օգտվեց վետոյի իրավունքից:

1996թ. դեկտեմբերի 18-ին Փարիզում ֆրանսահայերի հետ հանդիպման ընթացքում ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ասել է, որ Լիսաբոնը ոչ հաղթանակ էր և ոչ էլ պարտություն Արցախի համար: Լիսաբոնը մի փուլ էր, որի ընթացքում Ադրբեջանը և Արեւմուտքը համոզվեցին, որ Հայաստանը ճնշումներին տեղի չի տալու:

Լիսաբոնյան գագաթնաժողովում հայտարարված սկզբունքները եթե ընդունվեին, կնշանակեր, որ Հայաստանը ընդունում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, որի անքակտելի մաս էր հիշատակվում նաև Արցախը: Հայաստանի կողմից այս գագաթնաժողովում վետոյի իրավունքը օգտագործելը կանխեց ադրբեջանամետ բանաձևի ընդունումը :

1997թ.-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Լիսաբոնից հետո ներկայացրին մի փաստաթուղթ, որում ԼՂ կարգավիճակը ներկայացված էր Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում: Այդ փաթեթային կոչվող փաստաթղթում նշված էր, որ

[8] https://youtu.be/PjK1Duh2N9o

պետք է դադարեցվի զինված հակամարտությունը, ենթադրվում էր զինված ուժերի դուրսբերում գրավյալ տարածքներից, բուֆերային գոտու ստեղծում և միջազգային խաղարարար ուժերի տեղակայում, փախստականների և տեղահանված անձանց վերադարձ իրենց մշտական բնակության վայրերը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակում: Փաստորեն այս առաջարկները , որ այն ժամանակ լոկ թղթի վրա էին, 2020թ.-ի 44-օրյա պատերազմից հետո մեզ պարտադրված իրականությունն է, որի վտանգավորությունը ակնհայտ է թե Արցախի, թե Հայաստանի համար:

1997թ. հունվարին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը Ֆինլանդիայից փոխանցվեց Ֆրանսիային: Փետրվարին ԱՄՆ-ի միացումով ձևավորվեց եռանախագահությունը: Այսպիսով՝ կարգավորման գործընթացում ներգրավվեցին կովկասյան տարածաշրջանում շահեր հետապնդող երեք հիմնական կենտրոնները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Եվրամիությունը՝ ի դեմս Ֆրանսիայի:

1997թ. գարնանը Մոսկվայում տեղի ունեցավ եռակողմ՝ Հայաստան-Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան ձևաչափով բանակցությունների վերջին փուլը: Հայկական կողմը լքեց բանակցությունները, քանի որ Ադրբեջանը պնդեց կարգավորման հիմք ընդունել 1996-ի Լիսաբոնյան սկզբունքները: 1997-ի ամռանը և աշնանը Մինսկի խումբը հակամարտության երեք կողմերին պաշտոնապես, գրավոր ներկայացրեց երկու առաջարկներ, որոնցից առաջինը ընդունված է անվանել փաթեթային, երկրորդը՝ փուլային: Փաթեթային առաջարկը, որը մերժեց Ստեփանակերտը, հիմնված էր Լիսաբոնյան սկզբունքների վրա: Միջնորդների կազմած փաստաթուղթը ենթադրում էր, որ ԼՂ-ն Ադրբեջանի կազմում պետք է ունենա բարձր ինքնավարություն, իսկ ԼՂ-ի վերահսկողության տակ գտնվող շրջանները, բացի Լաչինից, վերադարձվեն Ադրբեջանին:

Ստեփանակերտը մերժեց նաև երկրորդ առաջարկը՝ փուլայինը, որը ԼՂ կարգավիճակի հարցը թողնում էր ապագային, իսկ առաջին փուլում վերացվում են պատերազմի հետևանքները: Սակայն կարծում ենք չկային երաշխիքներ, որ եթե Արցախը ընդուներ այս պահանջները և վերահսկվող տարածքները վերադարձվեին Ադրբեջանին, վերջինս չէր անհետանա բանակցություններից և կամ չէր հրաժարվի պայմաններից:

ԼՂՀ պաշտոնական ներկայացուցիչները, մասնավորապես Ռոբերտ Քոչարյանը, 1997թ. փետրվարին չեչենական խնդրի նմանությամբ ԼՂ հարցի լուծումը համարում էր ընդունելի տարբերակ: Հայաստանը ևս ընդունելի էր համարում այս տարբերակը : *1990-ական թթ. Չեչնիայի առաջին պատերազմից հետո Մոսկվան և Գրոզնին եկան համաձայնության, ըստ որի՝ Չեչնիայի կարգավիճակի որոշումը հետաձգվում էր հինգ տարով, որից հետո անցկացվում է հանրաքվե, իսկ մյուս հարցերին, որոնք վերաբերում էին պատերազմի հետեւանքների վերացմանը, լուծում էին տրվելու: Ըստ էության, չեչենական տարբերակը մոտ էր 1995թ. Դեյթոնի կարգավորմանը, որով Բոսնիայի և Հերցեգովինայի սերբ բնակչությանը՝ Սերբիայի Հանրապետությանը, տրվում էր հետաձգված հանրաքվեով ինքնորոշման իրավունք*:

1998թ.-ի վերջերին Մինսկի խումբը ներկայացրեց պաշտոնական, գրավոր նոր առաջարկներ, որոնք ընդունված է անվանել «Ընդհանուր պետություն»: Երևանը որոշ, Ստեփանակերտը՝ լուրջ վերապահումներով ընդունեցին այն որպես բանակցությունների հիմք, մինչդեռ Բաքուն մերժեց:

Ընդհանուր պետության առաջարկությունը հակամարտության հետևանքների վերացման հարցում գրեթե չէր տարբերվում նախորդ երկու փաստաթղթերից: Հիմնական տարբերությունը վերաբերում էր ԼՂ կարգավիճակին: Ներկայացված առաջարկության հենց սկզբում ասվում էր, որ «Լեռնային Ղարաբաղը հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում է և Ադրբեջանի հետ կազմավորում է ընդհանուր պետություն՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում»: Այդ առաջարկը անընդունելի էր Ադրբեջանի համար, քանի որ, փաստացի, Ադրբեջանի կազմում ստեղծվում են երկու անկախ պետություններ, և Բաքուն վերահսկողություն չի ունենում Ստեփանակերտի վրա:

Այս առաջարկը թույլ կտար համատեղել և սահմանների անձեռնմխելիության, և ազգերի ինքնորոշման սկզբունքը: Ճիշտ է, այն մեզ համար լրիվությամբ ընդունելի չէ, քանի որ Արցախը կլիներ Ադրբեջանի ինքնուրույն վարչական միավոր, բայց ինչպես Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը հետագայում հայաթափվեց, այնպես էլ սպասելի էր Արցախի հայաթափումը տարիների ընթացքում:

Պրահյան գործընթաց

«Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը» հոդվածում Տեր-Պետրոսյանը գրում էր. «Մերժելով նախ փաթեթային, ապա փուլային լուծումները եւ այսօր առաջարկելով կրկին վերադառնալ փաթեթային տարբերակին՝ ղարաբաղյան կողմն անհարմար դրության մեջ է դրել թե՛ Ղարաբաղը, թե՛ Հայաստանը»:

Վազգեն Սարգսյանը 1997թ. հոկտեմբերին հուզական նամակ էր գրել Տեր-Պետրոսյանին՝ «ինչի՞ համար էին այդքան զոհերն ու զոհողությունները, եթե պետք է գնայինք նման զիջումների..., չէ՞ որ մենք էինք 88-ին ժողովրդին համոզում, որ մեր փրկությունը մեր հավաքական ուժի, դիմադրության մեջ է»:

ԼՂՀ ԱԳՆ-ն ևս հակադրվում է Հայաստանի նախագահին՝ ընդգծելով, որ Տեր-Պետրոսյանը ոչ լիովին կոռեկտ է շարադրել Ստեփանակերտի մոտեցումները փաթեթային և փուլային տարբերակների վերաբերյալ: 1997թ. մայիսին համանախագահությունն առաջարկել էր համապարփակ համաձայնագրի նախագիծ, որը բաղկացած է երկու մասից. հակամարտության դադարեցում և կարգավիճակ: Թե՛ կարգավիճակի և թե՛ զինված հակամարտության դադարեցման համաձայնագրերը հիմնված էին Լիսաբոնի գագաթնաժողովում ԵԱՀԿ գործող նախագահի արած հայտարարության մեջ շարադրված սկզբունքների վրա, հայտարարություն, որը պաշտոնական փաստաթղթի բնույթ չի ստացել Հայաստանի դիրքորոշման շնորհիվ: Մինսկի խմբի համանախագահները ներկայացրին երկու մասից կազմված նորացված փաթեթային տարբերակ: Առաջին մասը վերաբերում էր զինված հակամարտության դադարեցմանը:

Ըստ համաձայնագրի՝

1. Հայաստանի ուժերը դուրս են բերվում Հայաստանի տարածք, իսկ Ղարաբաղի ուժերը՝ ԼՂԻՄ 1988թ. սահմանագծից ներս, տեղակայվում են ԵԱՀԿ բազմազգ խաղաղարար ուժեր, ապահովվում տեղահանված անձանց վերադարձը մշտական բնակավայրեր, Հայաստանը և Ադրբեջանը երաշխավորում են իրար միջև ազատ եւ անվտանգ երկաթուղային հաղորդակցություն, մասնավորապես Բաքու-Հորադիզ-Մեղրի-Օրդուբադ-Նախիջևան -Երևան գծով:
2. Լաչինը Ադրբեջանը վարձակալությամբ տրամադրում է ԵԱՀԿ-ին, որը պայմանագիր կկնքի միջանցքը բացառապես ԼՂ-ի կողմից օգտագործվելու մասին, ԵԱՀԿ-ն հետևում է Լաչին քաղաքը շրջանցող ճանապարհի շինարարությանը, որի ավարտից հետո Լաչին քաղաքը հանվում է Լաչինի միջանցքից: Այն վերադարձվում է ադրբեջանական վարչարարության ներքո, և նրա նախկին բնակիչները կկարողանան վերադառնալ:
   Եթե այս համաձայնագրով առաջարկվում էր Լաչինի նկատմամբ հսկողությունը ժամանակավորապես հանձնել ԵԱՀԿ-ին, ապա 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությամբ մինչև Լաչին քաղաքը շրջանցող ճանապարհի շինարարության ավարտը՝ Լաչինը ու Լաչինի միջանցքը մնում էին մեր հսկողության տակ (համատեղ ռուս խաղաղապահների), իսկ 2022թ. օգոստոսին այս կարևոր ճանապարհը հանձնելով՝ մենք մեծ ձախողում ունեցանք: Ադրբեջանը, տեր կանգնելով միջանցքին և քաղաքին, շրջափակել է Արցախը, ինչը հանգեցրել է բացասական հետևանքների:
   Ճապոնացի գիտնական Կիմիտակա Մացուզատոն Լաչինի մասին ասել է. «Լաչինի միջոցով ապահովվում է արդյունավետ կապ Երևանի և Ստեփանակերտի միջև /տնտեսություն, ռազմական ոլորտ, միջազգային կապեր/: Այդ իսկ պատճառով Լաչինի միջանցքի նշանակությունը բարձր է գնահատվում նաև ԼՂ հարցի կարգավորման բանակցային գործընթացի ընթացքում: Մինչդեռ մյուս օկուպացված տարածքները չունեն այն նույն կարևորությունը, որը հաճախ վերագրվում է ադրբեջանական լրատվամիջոցների կողմից»:
   Կարծում ենք, Լաչինի կարևորությունը հասկանալով, մենք երբևիցե չպիտի թույլ տայինք, որ այն մեր վերահսկողությունից դուրս մնար: Դա մեր ամենամեծ բացթողումներից է:
   Համաձայնագրի երկրորդ՝ «Կարգավիճակ» բաժնում ճանաչվում էր Ադրբեջանի և Հայաստանի տարածքային ամբողջականությունը, ԼՂ-ն մնում էր պետական և տարածքային կազմավորում Ադրբեջանի կազմում, իսկ նրա վարչական սահմանները գծվում են նախկին ԼՂԻՄ սահմաններով:
3. ԼՂ-ն և Նախիջևանը կունենան Ադրբեջանի և Հայաստանի հետ ազատ եւ առանց խոչընդոտների հաղորդակցության եւ կապի իրավունք:
4. ԼՂ-ին հնարավորություն էր տրվում ունենալ հանրաքվեով ընդունված սահմանադրություն, սեփական դրոշ, զինանշան, օրհներգ, նրա տարածքում գործում են ԼՂ-ի սահմանադրությունն ու օրենքները, Ադրբեջանի օրենքները գործում են ԼՂ-ի տարածքում, եթե նրանք չեն հակասում վերջինիս սահմանադրությանն ու օրենքներին: ԼՂ-ն ընտրում էր Ադրբեջանի խորհրդարանի ներկայացուցիչներ, մասնակցում նախագահի ընտրություններին:
5. ԼՂ քաղաքացիները ունենալու էին Ադրբեջանի անձնագրեր՝ Լեռնային Ղարաբաղ հատուկ հավելագրումով: Ադրբեջանի բանակը, անվտանգության ուժերը և

ոստիկանությունն իրավունք չեն ունենա մուտք գործել ԼՂ-ի տարածք, եթե չկա Ստեփանակերտի իշխանությունների թույլտվությունը: ԼՂ-ն կունենա ազգային գվարդիա և ոստիկանական ուժեր, նրա քաղաքացիներն իրավունք կունենան ծառայությունն անցկացնել ԼՂ-ի տարածքում:

Եթե համեմատենք փուլային ու փաթեթային տարբերակների առաջարկները, ապա «Փուլային»-ը մինչ այսօր հակամարտության կողմերին ներկայացված միակ տարբերակն է, որտեղ ԼՂ կարգավիճակից խոսք չկա, այն թողնված է ապագային: Մյուս կողմից՝ «փուլային»-ը միակ տարբերակն է, որում խոսք չկա Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին:

Ստամբուլի գագաթնաժողով

1999 թ. տեղի ունեցավ Ստամբուլի գագաթնաժողովը Քոչարյանի և Ալիևի երկխոսությամբ: Հայկական, ադրբեջանական և միջազգային մամուլում եղան հրապարակումներ, որ բանակցություններում քննարկվել էր Մեղրին Լաչինի հետ փոխանակելու հնարավորությունը: Ըստ դրա՝ Մեղրին տրվելու էր Ադրբեջանին, Լաչինը Ղարաբաղի հետ՝ ՀՀ-ին: Մեղրիով Հայաստանին տրվելու էր սուվերեն ճանապարհ, որով ՀՀ-ն կարող էր հաղորդակցության մեջ մտնել Իրանի հետ՝ առանց հատելու Ադրբեջանի սահմանագիծը: Ստամբուլի հռչակագիրը Արցախյան հակամարտության կարգավորումը կապում էր կրկին Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքի հետ:

ՀՀ–ի կողմից այս հռչակագիրը ստորագրելով հետընթաց կատարվեց Բուդապեշտի գագաթնաժողովի ձեռքբերումներից, երբ Արցախը ճանաչվել էր բանակցային կողմ: Ստամբուլի հռչակագրի ստորագրմամբ Արցախը դուրս մղվեց բանակցություններից:

Քոչարյան-Ալիև բազմաթիվ հանդիպումների արդյունքում 2001-ի գարնանը ծնվեց ոչ պաշտոնական մի փաստաթուղթ, որը կրում էր «Քիվեսթյան» անունը: Ինչպես 1998-ի ընդհանուր պետությունը, Քիվեսթյանը ևս մերժեց Ադրբեջանը: Լեռնային Ղարաբաղը Լաչինի միջանցքով միացվում էր Հայաստանին, իսկ Ադրբեջանը, որպես փոխհատուցում, ստանում էր Նախիջևանի հետ ցամաքային կապի հնարավորություն՝ «սուվերեն անցում» Մեղրիի շրջանով: Այս փաստաթուղթը դրական տարրեր ուներ: Այն փաստը, որ Արցախը Հայաստանի մաս էր կազմելու, մեզ համար հաջողություն կլիներ: Եթե մենք չկարողացանք հասնել մեր նպատակին՝ Արցախը ՀՀ-ին միավորել, ապա Ադրբեջանը, 2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարության 9-րդ կետի հիմքով պահանջում է, որ ՀՀ-ն երաշխավորի իր արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև տրանսպորտային հաղորդակցության անվտանգությունը: Մեղրիի ճանապարհի համար հարձակվում է նաև ՀՀ-ի սուվերեն տարածքի վրա, այսինքն մենք այսօր գնում ենք միակողմանի զիջման, մինչդեռ Քի Վեսթի պայմանագիրը եթե կնքվեր, կլիներ տարածքների փոխանակում:

Կազանում օգոստոսի 27-ին տեղի ունեցավ Քոչարյան-Ալիեւ հինգերորդ հանդիպումը: Առաջարկվում էր ԼՂ կարգավիճակը որոշել հանրաքվեով (համաժողովրդական քվեարկությամբ), ղարաբաղյան ուժերը դուրս բերել անվտանգության գոտու հինգ շրջաններից, բացառությամբ Լաչինի և Քելբաջարի: Փաստաթղթով նախքան հանրաքվեի անցկացումը ԼՂ-ն ստանում էր միջանկյալ կարգավիճակ:

Մասիս Մայիլյանը այս սկզբունքի մասին ասել է, որ դա «ԼՂՀ ինքնիշխանությունը սահմանափակելու՝ կասկածի տակ դնելով նրա անկախ կարգավիճակը, և պետությանը սեփական անվտանգության համակարգից զրկելու փորձ է նշանակում»: Անվտանգության իրական ապահովում կարող է լինել միայն ԼՂՀ անկախության հռչակումը:

Հանրաքվե անցկացնելու տարբերակը միջազգային հանրությունը սկսեց լրջորեն քննարկել 2004թ. աշնանը: 2005թ. հուլիսի կեսերին, երբ համանախագահները հերթական անգամ ժամանել էին տարածաշրջան, լրատվամիջոցներում եղավ արտահոսք, ըստ որի՝ հայկական կողմը համաձայն է Ադրբեջանին վերադարձնել ԼՂ-ն շրջապատող տարածքները, ինչի դիմաց Բաքուն կհամաձայնի հետագայում ԼՂ կարգավիճակի հարցով հանրաքվե անցկացնելուն:

Ռամբույե և Բուխարեստ

2006-2007թթ.. Միջազգային հանրությունը հույսեր ուներ, որ հնարավոր է հասնել գոնե միջանկյալ կարգավորման, սակայն կողմերը չկարողացան համաձայնության հասնել ԼՂ կարգավիճակի, Քելբաջարի շրջանի ու Լաչինի միջանցքի հարցերում: Բաքուն պնդում է տարածքային ամբողջականության, Երևանը և Ստեփանակերտը՝ ԼՂ ինքնորոշման իրավունքի, իսկ միջազգային հանրությունը՝ երկու սկզբունքները «հաշտեցնելու» հեռանկարը:

Մինչ Երևանն ու Բաքուն քննարկում էին հետաձգված հանրաքվեի մանրամասները, միջնորդներն աշխատանքային փաստաթուղթ մտցրեցին նոր տարր՝ միջանկյալ կարգավիճակի գաղափարը, ինչը պիտի թույլ տար ԼՂ-ին ունենալ ելք դեպի միջազգային շուկաներ, դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ-ում, արտասահմանյան ուղիղ ներդրումների, ընտրությունների ճանապարհով երկիրը կառավարելու պատեհություն, այսինքն՝ ստատուս-քվոն օրինականացնել:

Պրահյան գործընթացի շրջանակներում նորամուծությունը հետաձգված հանրաքվեի գաղափարն էր, որը ենթադրում էր հետևյալը՝ ղարաբաղյան ուժերը դուրս են գալիս հինգ շրջաններից, իսկ Քարվաճառի վերադարձը կապվում էր ԼՂ-ում սպասվելիք հանրաքվեի ժամկետների հետ: Քանի դեռ հանրաքվե չի կայացել ԼՂ-ում՝ Քարվաճառը մնալու էր հայկական ու միջազգային համատեղ հսկողության տակ: Վիճելի էր նաև Լաչինի միջանցքի կարգավիճակի հարցը: Բաքուն պնդում էր, որ միջանցքից բացի շրջանի մյուս մասերը, այսինքն՝ Լաչինի «ոչ միջանցքային» հատվածները, հետ տրվեն հնարավորինս շուտ, ինչին Երևանը դեմ էր: Լաչինի շրջանը ունի 1835 քառակուսի կմ տարածք, մինչդեռ միջանցքը ենթադրում էր 25-ից 50 կմ լայնություն: Լաչինի միջանցքը հայկական կողմի պատկերացումով պետք է ունենա ԼՂ-ի հետ նույն կարգավիճակը:

Ադրբեջանը առարկում էր եւ առաջարկում այլ տարբերակներ՝ միջանցքն օգտագործել միասնաբար, դնել ԵԱՀԿ իրավասության տակ կամ վարձակալել, ասենք՝ 99 տարով: Այսինքն, Բաքուն չէր հաշտվում Լաչինի միջանցքը կորցնելու փաստի հետ:

Գործընթացի ամբողջ պատմության ընթացքում առաջին անգամն է, որ փաստաթղթի հիմքում ընկած է ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Քոչարյանը 2007թ. դեկտեմբերին պնդեց, որ մինչև Տեր-Պետրոսյանի հրաժարականը բանակցությունները տարվում էին Ադրբեջանի տարածքային ամբողջականության համատեքստում: Կիրառվում էր հետևյալ բանաձևը. դե-յուրե՝ Ադրբեջանի կազմում, դե-ֆակտո՝ համեմատաբար անկախ կարգավիճակ՝ լայն ինքնավարություն Ադրբեջանի կազմում: Ներկայումս բանակցային գործընթացի հիմքում ընկած է ինքնորոշման սկզբունքը: Վերջնական կարգավիճակը պետք է որոշվի ԼՂՀ-ում տեղի ունենալիք հանրաքվեով: Մինչև հանրաքվեն ենթադրվում է ԼՂՀ-ում տիրող իրավիճակի միջազգային ճանաչում:

Դեպի Մադրիդ

Մադրիդում նոյեմբերի 29-30-ը ԵԱՀԿ արտգործնախարարների տարեկան հանդիպմանը միջնորդ պետությունների ավագ դիվանագետները՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Նիկոլաս Բըրնսը և Ֆրանսիայի արտգործնախարար Բեռնար Քուշները, Օսկանյանին և Մամեդյարովին ներկայացրեցին 14 կետանոց գրավոր փաստաթուղթ, որում ամրագրված էին կարգավորման հիմնական սկզբունքները:

Այս փաստաթուղթը հիմնարար խնդրին է անդրադառնում՝ ԼՂ ժողովրդի անվտանգությանը՝ ինքնորոշման միջոցով, ինչպես նաև փախստականների ու տարածքների խնդրին, որոնք ծագել են այդ ինքնորոշման պայքարի արդյունքում:

Մադրիդյան սկզբունքները ենթադրում են

1. Նախկին ԼՂԻՄ շրջապատող տարածքների հանձնում Ադրբեջանին
2. Արցախի միջանկյալ կարգավիճակ
3. Հայաստանը Արցախին կապող միջանցք
4. Արցախի վերջնական իրավական կարգավիճակի հետագա սահմանում հանրաքվեի միջոցով
5. Ներքին տեղահանված և փախստականների՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք
6. Անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն նաև խաղաղապահ գործունեություն

Նախ անորոշ է, թե ինչպես են փոխկապակցված Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և Արցախի երաշխավորված կապը Հայաստանի հետ Լաչինի միջանցքով: Միևնույն ժամանակ փախստականների վերադարձի, միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայման մեխանիզմները շարադրված չեն:

Արհեստականորեն ձգձգվում էր նաև ԼՂՀ կարգավիճակի սահմանումը:

2007-ի նոյեմբերին ԵԱՀԿ Մադրիդի նախարարական հանդիպմանը Մինսկի խմբի եռանախագահությունը ներկայացնող ավագ դիվանագետները Երևանին ու Բաքվին

փոխանցեցին 14 կետանոց շրջանակային մի փաստաթուղթ, որը ևս հիմնված էր հետաձգված հանրաքվեի (պլեբեսցիտ) փիլիսոփայության վրա: Այդ փաստաթուղթը Հայաստանը և Ադրբեջանը ոչ մերժեցին, ոչ էլ ընդունեցին:

Իրականում, եթե ընդունեինք նոր հանրաքվեի անցկացումը, դա կնշանակեր ջնջում ենք 1991թ.-ից սկսած մեր գոյությունը, դրանով ոչ միայն մեր անկախության հանրաքվեն ենք կասկածի տակ առնում, այլև դրան հաջորդած բոլոր ընտրությունները, Սահմանադրության հանրաքվեն: Եթե Ադրբեջանը պնդում է, որ 1991թ.-ին ԼՂ-ում բնակվող ադրբեջանցիները չեն մասնակցել հանրաքվեին և դրանով կասկածի տակ դնում հանրաքվեի լեգիտիմությունը, ապա պետք է նշել, որ ադրբեջանցիները փոքրամասնություն էին մեր տարածքում, Ադրբեջանի անկախության հանրաքվեն էլ անց է կացվել առանց ԼՂ-ի բնակչության մասնակցության: Եթե Արցախի անկախությունը լեգիտիմ չէ, լեգիտիմ չէ նաև Ադրբեջանինը:

Հայաստանում 2008-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո նոր իշխանությունը որպես հիմք ընդունելի համարեց բանակցությունները շարունակել հենց Մադրիդյան սկզբունքների հենքով: Մադրիդյան փաստաթղթից ածանցյալ կազմվել է Կազանի առաջարկությունը: Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեջանական բոլոր տարածքները, որոնք գտնվում են հայկական վերահսկողության տակ պիտի վերադարձվեին Ադրբեջանի վերահսկողությանը, բայց դա պետք է կազմակերպվեր փուլերով: Առաջին փուլում վերադարձվում են Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Զանգելանի և Ղուբաթլուի շրջանները: Հետագայում վերադարձվում են Քելբաջարի շրջանն ու Լաչինի շրջանի ոչ միջանցքային հատվածները: Իրականում 2020թ. նոյեմբերի 9-ի համաձայնագրով այս սկզբունքները, ըստ էության, իրականացվեցին: Նախկին ԼՂԻՄ-ի շրջակա տարածքները վերադարձան Ադրբեջանի հսկողությանը միանգամից, բայց ոչ թե դիվանագիտական ջանքերի արդյունքում, այլ ռազմական գործողությունների: Նոր տարածքային սահմանազատումն էլ տեղի է ունեցել ոչ միայն ԼՂԻՄ-ի և շրջակա 7 շրջանների միջև գծերի, այլև Շուշիի, Մարտունու, Հադրութի, Մարտակերտի շրջաններից: Բացի այդ էլ Ադրբեջանն ապահովել է միջանցք իր արևմտյան շրջանների և Նախիջևանի միջև:

Սերժ Սարգսյանի ժամանակ բանակցություններն ընթանում էին 3 սկզբունքների հիման վրա՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի[9] 2- րդ հոդված՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառում, 4-րդ՝ տարածքային ամբողջականություն և 8-րդ՝ ազգերի ինքնորոշում:

2015թ. դեկտեմբերի 19-ին Հայաստանի և Ադրբեջանի նախագահները հանդիպել են Բեռնում: Բանակցային լճացման պայմաններում 2016 թ տեղի է ունենում ապրիլյան 4-օրյա պատերազմը: 2016թ. Հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում Պուտինի միջնորդությամբ տեղի է ունենում հանդիպում՝ շեշտադրելով բանակցությունները շարունակելու բացարձակ անհրաժեշտությունը:

Ս. Սարգսյանը Արցախյան հակամարտության կարգավորման համար որդեգրել էր Քոչարյանի քաղաքականությունը:

[9] https://www.osce.org/files/f/documents/e/0/39507.pdf

Քոչարյանը իր նախագահելու տարիներին բանակցությունները վարելիս ասել էր. «Ես որոշակիորեն այստեղ ներկայացնում էի նաև ղարաբաղյան կողմի շահերը՝ որպես նախկինում ԼՂ ղեկավար՝ իմանալով նրա անհանգստությունները» [10]:

Եթե սա բավարար էր, որ ԱՀ-ի շահերը ներկայացներ ՀՀ-ն, ուրեմն մենք անօրեն ճանապարհով հետագայում մեր ճակատագիրը որոշեցինք այնպիսի մի անձի շնորհիվ, ով որ Ղարաբաղցի չէ, ոչ էլ հասկանում էր ղարաբաղցիների անհանգստությունը:

Փաշինյանը իշխանությունը ստանձնեց 2018թ.-ին: 2019թ.-ի օգոստոսի 5-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կազմակերպված հանրահավաքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասել է, որ «Արցախի հարցի կարգավորման բանակցային գործընթացի նպատակը պետք է լինի Արցախի ժողովրդի ինքնորոշումը և անվտանգության համար մղված Արցախյան ազատամարտի արդյունքների պաշտպանությունը: Բանակցությունների արդյունքում Հայաստանի ու Արցախի կառավարությունների համար ընդունելի համարված որևէ լուծում կարող է ընդունելի դիտվել միայն Հայաստանում ու Արցախում ժողովրդական հավանության դեպքում»: Նա Արցախյան հիմնախնդրի լուծումը սկսեց իր սեփական կետից և դարձավ Արցախի ներկայիս դառը իրականության պատճառ:

Նախագահ Ի. Ալիևը հայտարարել էր.- «Մենք թուլ չենք տա, որ Հայաստանը զբաղվի բանակցությունների իմիտացիայով: Մենք բանակցություններ վարելու ենք, քանի դեռ ունենք այս կերպ երկրի տարածքային ամբողջականության վերականգնման հույս, եթե մենք տեսնենք, որ դա հնարավոր չէ, ապա ադրբեջանական պետությունը կվերականգնի իր տարածքային ամբողջականությունը՝ օտագործելով ռազմական տարբերակը»:

Այդպես էլ 2020 թ, սեպտեմբերի 27-ին սկսվեց և 44 օր տևեց Արցախյան 3-րդ պատերազմը:

Անձը, ով հրապարակայնորեն հայտարարել էր՝ «Արցախը Հայաստան է և վերջ», այսօր 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո հայտարարում է, որ «2018թ.-ից դիրքորոշումը եղել է այն, որ ՀՀ կառավարությունը չպետք է որոշի ԼՂ- ի ճակատագիրը ու հարաբերությունները»:

Հարց է առաջանում, թե ինչու՞ 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը ստորագրելիս նա ստանձնեց Արցախի 120000 բնակչության դժբախտության պատճառը դառնալու «հերոսությունը»:

ԱՀ-ն ոչ ստորագրել է նոյեմբերի 9-ի հայտարարությունը, ոչ էլ պայմանագրի կողմ է հանդիսանում: Ի տարբերություն 1994թ. զինադադարի համաձայնագրի, որտեղ Ադրբեջանից և ՀՀ-ից բացի 3-րդ ստորագրող կողմը Ղարաբաղն էր, 2020թ.-ի եռակողմ հայտարարության կողմերն էին՝ ՀՀ, Ադրբեջան և Ռուսաստան:

Բաքուն տարիներ շարունակ առաջարկում էր հրաժարվել մադրիդյան սկզբունքների համաձայնեցումից և անմիջապես ձեռնամուխ լինել խաղաղության համապարփակ պայմանագրի մշակմանը, այն ինչ այսօր տեղադրված է բանակցությունների սեղանին: Իր «Երկրի հակառակ կողմը» գրքում Փաշինյանը գրել էր. «Սրտի և ուղեղի հակամարտություն.

[10] 1999թ. օգոստոսի 21, Ժնև, Հեյդար Ալիևի հետ հանդիպում

Սիրտը ուզում է, որ Արցախի դաշտավայրը իրենը լինի ... ուղեղն ասում է՝ մասի համար չի կարելի ամբողջը վտանգել և առնվազն պետք է հայտարարել, բարձր հայտարարել, որ այդ դաշտերը մեզ պետք չեն, որ մենք պատրաստ ենք էդ հողերը վերադարձնել է հանուն խաղաղության»[11]:

Պատկերն ամբողջական լինելու համար հարկ է դիտարկել, որ դեռևս 2020թ. փետրվարին վարչապետ Փաշինյանը ներկայացրել է վեց կետեր, որոնք նա անվանել է Մյունխենյան սկզբունքներ.

1. Լեռնային Ղարաբաղը անկախություն է ստացել այնպես, ինչպես Ադրբեջանը:

2. Լեռնային Ղարաբաղը կոնֆլիկտի եւ բանակցային կողմ է, առանց որի հետ բանակցելու հնարավոր չէ լուծել կոնֆլիկտը:

3. Չկան տարածքներ, կա անվտանգություն. Լեռնային Ղարաբաղը չի կարող զիջել իր անվտանգությունը:

4. Հնարավոր չէ կոնֆլիկտը լուծել մեկ կամ երկու գործողությամբ. բանակցային գործընթացում անհրաժեշտ են «միկրո հեղափոխություններ», ապա «մինի հեղափոխություններ», ապա ճեղքում:

5. Հարցի որեւէ լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի ժողովրդի համար, Ղարաբաղի ժողովրդի համար, Ադրբեջանի ժողովրդի համար, եւ Հայաստանն ու Ղարաբաղը պատրաստ են լրջագույն ջանքեր գործադրել նման լուծում գտնելու համար: Այսպիսի պատրաստակամություն պիտի ցուցաբերի նաեւ Ադրբեջանը:

6. ԼՂ հարցը չունի ռազմական լուծում: Եթե որեւէ մեկը կասի, որ հարցը ռազմական լուծում ունի, Ղարաբաղի ժողովուրդը կասի՝ ուրեմն այն վաղուց լուծված է:

Փաստացի «Չկան տարածքներ, կա անվտանգություն. Լեռնային Ղարաբաղը չի կարող զիջել իր անվտանգությունը» կետը ամփոփեց իր գործունեությունը: Նա բանակցությունները վերադարձրեց առաջին փուլի ձևաչափ, որը նախատեսում էր ԼՂ կարգավիճակ Ադրբեջանի տարածքում:

Ստորագրեց նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը, հանձնեց տարածքներ՝ առանց հստակեցման թողնելու Արցախի կարգավիճակի հարցը: Կարգավիճակի հարցը չլուծվեց այսքան զիջումներից հետո, Ադրբեջանն էլ պահանջում է նոր տարածքային զիջումներ նաև ՀՀ տարածքից:

Եզրակացություն

Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ ձևավորվող պետությունների ճանաչման գործընթացների ուսումնասիրությունը վկայում է, որ պետության բնականոն զարգացումը պետք

[11] Ն. Փաշինյան, «Երկրի հակառակ կողմը », էջ 290

է ընթանա հետևյալ երեք փուլերով՝ անկախության հռչակում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին) և պետության կայացում, որոնցից ամենատևականն ու ամենաբարդը երկրորդն է՝ ճանաչումը, քանի որ սահմանափակ միջազգային շփումներ ունեցող երիտասարդ պետությունը պետք է կարողանա աջակցություն ստանալ այլ պետություններից:

Մեր անկախությունն անգամ Հայաստանը չճանաչեց, չնայած 2016 թվականի Ապրիլյան պատերազմից հետո Հայաստանը հանդես եկավ Արցախի անկախության ճանաչման օրինագծի մշակմանբ: ՀՀ փոխարտգործնախարար Շավարշ Քոչարյանը հայտարարեց, որ եթե Ադրբեջանը նոր ագրեսիա սկսի ու խախտի զինադադարի մասին բանավոր պայմանավորվածությունը, Հայաստանը կճանաչի Արցախի անկախությունը: Հայաստանը բազմիցս հայտարարել է, որ հանդիսանում է Արցախի բնակչության անվտանգության երաշխավորը: Հակամարտության վերաբերյալ ՀՀ մոտեցումները հստակորեն արտացոլված են «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն» փաստաթղթում[12], որի մի ձևակերպման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով: Արցախի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է ստանա նաև ղարաբաղյան կողմի հավանությունը՝ Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Արցախի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն: Ինչպես Հայաստանի, այնպես էլ Արցախի իշխանությունները բազմիցս նշել են, որ բանակցային գործընթացը կարող է հաջողություն ունենալ միայն այն դեպքում, եթե Արցախը հանդես գա որպես լիիրավ բանակցային կողմ:

Խնդրի լուծման ձգձգումն էլ տասնամյակների ընթացքում պահպանեց լարվածությունը, էապես սահմանափակեց օրինականորեն ինքնորոշված արցախահայության զարգացման հնարավորությունները և պետության կայացման հնարավորությունները: Ղարաբաղյան կոնֆլիկտը դարձավ սերունդների խնդիր, նոր զոհերի, կորուստների պատճառ:

Հակամարտության իսկ սկզբից ԼՂ-ի ներկայացուցիչների բանակցային գործընթացին մասնակցության ձևը հստակեցված չէր, ապա ընդհանրապես ԼՂ-ն հեռացվեց բանակցություններից և ԼՂ-ի շահերի պաշտպանությունը ստանձնեց ՀՀ-ն, մինչդեռ Խնդրի իրավական հիմքերի տեսանկյունից հաստատված չէ ՀՀ-ի Ղարաբաղյան հակամարտության կողմ լինելու հանգամանքը: Հայկական կողմի դիվանագիտական թերացումների հետևանքով է, որ Արցախը բանակցությունների սուբյեկտից դարձավ բանակցությունների օբյեկտ, ինչին չընդդիմացան նաև Արցախի իշխանությունները: Սա հաջողություն էր Ադրբեջանի համար, մեծ ձախողում մեզ համար, քանի որ Ադրբեջանը աշխարհին ցույց տվեց, որ այս հակամարտությունը ՀՀ-ի հետ է՝ ԼՂ-ի տարածքի համար, որը զավթվել է ՀՀ-Ի ագրեսիայի արդյունքում:

Սկսած Լևոն Տեր-Պետրոսյանից մինչև Նիկոլ Փաշինյան, բանակցությունները սխալ հունով են ընթացել: Իրավական ուժ ունի միայն 1994 թ. զինադադարը, որը ստորագրել են Ղարաբաղը, Ադրբեջանը, Հայաստանն ու Ռուսատատանը:

---

[12] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189

Եթե միջազգային հանրությունը, այդ թվում՝ Ադրբեջանը, ցանկանում են լուծել արցախյան հիմնահարցը, անտրամաբանական է, որ խնդիրը քննարկվում է այնպիսի ձևաչափով, որի առանցքային մասնակիցներից մեկը ներգրավված չէ:

Առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցության բանակցային գործընթացում հաջողություն ապահովել հնարավոր չէ: Բանակցությունների գործընթացում ԼՂ ներկայացուցչության հստակորոն չորոշված կարգավիճակը, Ադրբեջանի կողմից իր պայմաններն ու պահանջները թելադրելը բացասական են ազդում բանակցային ողջ գործընթացի վրա: Ադրբեջանը Արցախի հակամարտությունը մեկնաբանում է որպես Հայաստանի կողմից ագրեսիայի և տարածքային ընդլայնման արդյունք: Խնդիրը դիտարկվում է որպես միջպետական հակամարտություն, ոչ թե Արցախահայության ինքնորոշման իրավունք: Ադրբեջանը մերժում է Արցախի իշխանությունների հետ ուղղակի բանակցությունները, քանի որ դա մեզ համար հնարավորություն կլիներ ապացուցելու, որ մենք ինքնիշխան պետության կարգավիճակ ունենալու համար բոլոր տարրերը ունենք:

Հայաստանը իրավասու չէ բանակցել Լեռնային Ղարաբաղի անունից, քանի որ Լեռնային Ղարաբաղը որևէ փաստաթղթով չի լիազորել Հայաստանին իր փոխարեն հանդես գալու: Լեռնային Ղարաբաղը ցանկացած պահի կարող է հրաժարվել այն փաստաթղթերից, որ կստորագրեն Ադրբեջան-Հայաստան կողմերի միջև, հետևաբար նաև 2020թ.-ի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից:

ԱՀ ԱԺ-ի նախկին նախագահ Աշոտ Ղուլյանը իր հարցազրույցներից մեկում Նշել էր, որ «1998թ. ստեղծվել էր մի իրավիճակ, երբ բանակցությունները կարող էին խզվել: Այն հաղթահարելու համար էր ընտրվել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև ուղղակի խորհրդատվությունների ձևաչափը: Բայց դա չի նշանակում, որ ԼՂ-ն դադարել է լինել հակամարտության կողմ»:

ԼՂՀ նախկին արտգործնախարար Գեորգի Պետրոսյանն էլ նշել էր, որ «չկա որևէ փաստաթուղթ, ըստ որի Արցախին հանել են բանակցային գործընթացից»:

Այնպես որ այսուհետ բանակցություններում Արցախի մասնակցությունը ոչ թե պետք է լինի ցանկություն, այլ անհրաժեշտություն, սկզբունք:

Պետք է բացառվեն բանակցային բոլոր այն տարբերակները, որտեղ Արցախը Ադրբեջանի կազմում է լինելու, անհնար է այդպես արցախահայերի խաղաղ և անվտանգ գոյատևումը ու ներքին ինքնորոշումը:

Ինչպե՞ս կարող է Արցախը լինել Ադրբեջանի տարածքում, արցախահայությունը ապրել ադրբեջանցիների հետ, երբ մեզ սպառնում է նոր ցեղասպանություն:

2022թ.-ի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը շրջափակել է Արցախը՝ փակելով «Կյանքի ճանապարհը»՝ Արցախը ՀՀ-ին կապող ճանապարհը՝ Բերձորի միջանցքը, խափանել է գազամատակարարումը, էներգամատակարարումը: Ի դեպ Եթե Լևոն Տեր Պետրոսյանի ժամանակ 1997թ.-ի սեպտեմբերի առաջարկությամբ կարգավիճակի և Լաչինի խնդիրը

թողնվում էր ապագային, Մադրիդյան փաստաթղթով հայկական վերահսկողության տակ էր մնում միայն Լաչինի միջանցքը, Դրան հետևող տարբերակների մեջ Լաչինը հանձնվում է անորոշ միջազգային ուժի, ապա այսօր փաստ է, որ Լաչինը և Լաչինի միջանցքը գտնվում է Ադրբեջանի հսկողության տակ: Առանց պատերազմի Ադրբեջանը տիրացավ այդքան կարևոր շրջանի:

Կոսովոյի անկախացման վերաբերող պրատիկան վկայում է այն մասին, որ միջազգային հանրությունը ճանաչում է, որ ինքնորոշման սկզբունքի շրջանակներում թույլատրվում է անկախացումը, եթե համապատասխան ազգը չի կարող կենսունակ իրականացնել իր ինքնորոշման իրավունքը գոյություն ունեցող պետության տարածքի սահմաններում: Իսկ Այսօր նույն այդ միջազգային հանրությունը միայն բավարարում է մեզ իր կոչերով և հայտարարություններով:

Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը բացառում է արցախահայությանը Ադրբեջանի իրավազորության ներքո բերելու հնարավորությունը, ու ևս մեկ անգամ հաստատում է Արցախի ինքնորոշման այլընտրանք չունեցող բնույթը:

Եթե հայկական քաղաքական վերնախավը և հանրությունը մինչև 2020թ-ի 44-օրյա պատերազմը համոզված էին, որ Արցախի խնդիրը հայկական կողմի զիջումներով կլուծվի, կունենան խաղաղություն, ապա ադրբեջանական կողմն էլ ավելի է բացել իր ախորժակը և պահանջներ է դնում Հայաստանի շրջանների առջև, անգամ մայրաքաղաք Երևանին տիրանալու հավակնություն ունի: Ադրբեջանը ուժի գործադրմամբ լուծում է իր առջև դրված բոլոր խնդիրները:

Արցախի հարցի լուծման մանդատ ունեցող ԵԱՀԿ Մինսկի խումբը ևս չի գործում, քանի որ Ֆրանսիան ու ԱՄՆ-ն հրաժարվում են համագործակցել Ռուսաստանի հետ, այսինքն գերտերությունների շահերի բախումից ևս մենք տուժվում ենք:

Մինչ օրս միջազգային հանրությունը մեր հակամարտության վերաբերյալ իր մոտեցումներում առավելությունը տալիս է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքին, մինչդեռ երկակի ստանդարտներով գործելով, Արևմուտքը ճանաչել է Կոսովոյի, իսկ Ռուսաստանը Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախությունը:

Մեր այսօրվա ձեռքբերումը կարող է լինել այն, որ մենք հասնենք ինքնորոշման և պահպանվի արցախահայերի անվտանգությունը:

Եթե ամփոփենք հակամարտության կարգավորման գործընթացը, կգանք այն եզրակացության, որ բանակցություններում, ունենալով թույլ դիվանագիտություն, ցանկալին պնդելով, կորցրինք ամենաանհրաժեշտը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Տիգրան Թորոսյան-«Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները», ք.Երևան
2. «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խոչընդոտները »,Հրայր Փաշայան, Լիանա Բալայան,2018թ.
3. Ղարաբաղյան կարգավորում, հայացք Ղարաբաղից, Քրոնիկոն 2006-2009
4. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն/ Charter of the United Nations
5. Ղարաբաղյան խնդիրը հայաստանյան պաշտոնական դիսկուրսում, Գայանե Այվազյան
6. «ԼՂ-ի հիմնահարցը ԵԱՀԿ Բուդապեշտի, Լիսաբոնի գագաթաժողովներում», Գևորգյան Մ.Գ., 2019թ., ք. Երևան
7. Արցախյան հակամարտության և Ադրբեջանական հանրապետության կողմից թուլ տրված միջազգային իրավունքի խախտումների վերաբերյալ մասնագիտական կարծիք, 2017թ. . ք. Երևան
8. Արցախը բանակցային ձևաաչափում, Թաթուլ Հակոբյան, 2019թ.
9. Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում, Հ. Փաշայան,2015թ., ք.Երևան
10. ЗАКОН О ПОРЯДКЕ РЕШЕНИЯ ВОПРОСОВ, СВЯЗАННЫХ С ВЫХОДОМ СОЮЗНОЙ РЕСПУБЛИКИ ИЗ СССР, 3 апреля 1990 года
11. Владимир Казимиров, “Мир Карабаху”, июль 2009г.
12. Բիշքեկյան արձամագրություն
13. «Ադրբեջանի Հանրապետության անկախության վերականգնման մասին » սահմանադրական ակտ
14. Montevideo Convention on the Rights and Duties of States, 1933
15. International Court of Justice, “Accordance With International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo”, Advisory Opinion of 22 July 2010,
16. Лиссабонский документ,1996г.-https://www.osce.org/files/f/documents/2/4/39543.pdf
17. Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտ, Հելսինկի 1975թ.
18. Լևոն Տեր-Պետրոսյան. «Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը». 1 նոյեմբերի, 1997թ
19. **Թաթուլ Հակոբյանի «ԿԱՆԱՉ ու ՍԱ . ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ »**
20. **Ժիրայր Լիպարիտյան, «Փաթեթային, փուլային և մոռացված պահեր »,2017թ.-**aravot.am
21. https://www.aniarc.am/
22. https://youtu.be/PjK1Duh2N9o
23. http://www.un.org –ՄԱԿ-ի կայք
24. http://vn.kazimirov.ru –Վ. Կազիմիրովի կայք
25. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189-«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»